ՀՊՏՀ ռեկտոր Կորյուն Աթոյանի շնորհավորական ուղերձը Ուսանողների միջազգային օրվա առիթով

Սիրելի ուսանողներ

Այսօր հրաշալի տոն է, նշվում է Ուսանողների միջազգային օրը: Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ, մաղթում, որ ուսանողական կյանքի բախտորոշ տարիները ձեզ համար ստեղծեն այն ամուր հիմքը, որը հնարավորություն կտա կերտելու արժանապատիվ ապագա:

Սիրելի ուսանողներ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ղեկավարության գործունեությունն ուսանողակենտրոն է, ինչի մասին, վստահ եմ, շատերդ կհավաստեք: Մեր ներկա գործունեությունն ամբողջությամբ կառուցվում է ձեր շահերի սպասարկման վրա. կրթության որակի բարձրացում, գիտահետազոտական աշխատանքների ակտիվացում, աշխատաշուկայի հետ կապերի ամրապնդում, կրթական միջավայրի արդիականացում և բազում այլ ծրագրերի իրականացում, որոնց վերջնարդյունքը բազմակողմանի գիտելիքներով, գործնական հմտություններով, զարգացման հստակ նպատակներով, պետության և երկրի ապագայի համար արժանի սերունդ կրթելն է:

Վստահ եմ, որ դեռ շատ անելիքներ ունենք, բայց կարևոր է, որ մեկնարկն արդեն տրված է, և բարեփոխումների ընթացքն

անկասելի է: «Մենք փոխվում ենք» նպատակաուղղված քայլերով, և ես ուրախ եմ այս դժվար ճանապարհին ձեր աջակցությունը տեսնելու համար: Ուրախ եմ, որ մեր աչքի առաջ հասակ է առնում գրագետ, նպատակասլաց, զարգացող, բազմակողմանի հետաքրքրություններ ունեցող մի բացառիկ սերունդ, որը վաղվա ապավենն է:

Եվս մեկ անգամ շնորհավորում եմ ձեզ, սիրելի ուսանողներ, մաղթում առողջություն, երջանկություն, բարի նպատակների իրականացում, կենսունակ ծրագրերի իրագործում: Առաջ շարժվեք այն գիտակցմամբ, որ դուք կարող ուժ եք, ում վստահված է մեր սիրելի երկրի վաղվա օրը:

Հարգանքով՝

ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ